երեխայ 'ի յերեսս աշխարհին հայաստանեաց եթէ արու և եթէ էգ, անուանակոչութեամբ և 'ի յիշելոյ անունն նմայ թէ ում որդի և կամ յումմէ դուստր՝ մի լիցի ոչ ոք այլ անուամբ 'ի կողմանէ հայրութեան, բայց անուն սրբոյն որում աւուր երեխայն այն մկրտի 'ի տօնի նորա անուն նոյն սրբոյն եղիցի անուն հօր նմայ, թէպէտ մայր նորա անօրէնութեամբ յղացաւ և բնականապէս ծնաւ, այլ 'ի շնորհէ սրբոյ աւետարանի մկրտութեան մկրտեալն գտցի շնորհ տանիլ 'ի վերայ իւր որդիութիւն որում սրբի տօնի օր մկրտեցաւ։

## ԳԼՈՒԽ ՅԽԹ.

Մի՛ ոք անօրէնութեան ծնունդ թէ արու և թէ էգ մի՛ յիշխեսցի ժառանգ և ժառանգորդ լինիլ հօր, քան զի ոչ ոք կարէ հաւատալ թէ յումմէ ծնաւ, բայց 'ի վկայութեան մօր իւրոյ, և ով ոք մայր որ այնքան լրբասցի մինչ անկողինն մաքուր ամուսնութեան իւրոյ պղծեալ. ծնցի անօրէնութեամբ զաւակ, վկայութիւն նորայ անարժան է, վասն այսորիկ բարձցի ժառանգութիւն ամենայն անօրէնութեամբ ծննդոց, բայց այն որ պիղծ հայր և մայր նորայ ընդ կտակս մահուան իւրեանց շնորհեսցեն նմայ, սա ևս ոչ հուչակելով իբր մասն 'ի ստացուածէ իւրեանց ժառանգութիւն անօրէնութեամբ ծնեցելոց իւ-